Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 230

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Զովաբերի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-1)

ա) աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է աշխատակազմի փաստաթղթաշրջանառությունը՝ կապված հարկերի, տուրքերի և վարձավճարների գանձման դինամիկայի հետ:

բ) իրականացնում է հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրում, կատարում է դրանց մուտքագրումը և քաղաքացիներին է տրամադրում մուտքագրման կտրոնները:

գ) մուտքագրման վերաբերյալ տեղեկությունները տրամադրում է համակարգչային օպերատորին՝ նրա կողմից համակարգիչ մուտքագրելու համար:

դ) վարում է գանձումների և ապառքների գիրքը:

է) կատարում է գանձապահի գործառույթները և վարում է դրամարկղային գիրքը

զ) մասնակցում է անշարժ գույքի, անասունների հաշվառման աշխատանքներին, կազմում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համապատասխան տեղեկանքներ, զեկուցագրեր:

է) մասնակցում է ոռոգման ջրի մատակարարման, բաշխման և վարձավճարների գանձման աշխատանքներին:

ը) իր անմիջական ղեկավարին, ըստ անհրաժեշտության ներկայացնում է իր կողմից սպասարկվող բնագավառին վերաբերվող աշխատանքների մասին զեկուցագրեր, առաջարկություններ:

թ) իրականացնում է իրեն մակագրված դիմումների, առաջարկությունների և գրությունների ուսումնասիրություն: Նախապատրաստում է դրանց վերաբերյալ պատասխաններ և ներկայացնում է իր անմիջական ղեկավարին:

ժ) իրականացնում է Սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: 2-րդ կարգի մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) ունի առնվազն միջնակարգ կրթություն
բ)ունի «Իրավական ակտերի մասին», «ՏԻՄ», «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը,
դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի հուլիսի 16-ը ժամը 10:00:

Խնդրում ենք դիմումներն ուղարկել միայն էլեկտրոնային տարբերակով՝ e-request էլեկտրոնային հասցեին: Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք. Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 011 56-27-76):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարության աշխատակազմ